ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2023 թվականի N ___

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի, Իջևան համայնքի 2023թ տարեկան բյուջեն՝
   - Եկամուտների գծով 1839014,2 հազար դրամ
   - Ծախսերի գծով 1924059,8 հազար դրամ
   - Դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 85045,6 հազար դրամ

2. Հաստատել համայնի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների /հավելված 1/:

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման /հավելված 2/:

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման /հավելված 3/:

5.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դիֆիցիտը /պակասուրդը/ /հավելված 4/:

6.Հաստատել համայնքի բյուջեի դիֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղությունները /հավելված 5/:

7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման /հավելված 6/:

8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 20%-ը:

10 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023թ հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: